ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
OFFICE OF THE PRIME-MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEPARTMENT OF INFORMATION AND PUBLIC RELATIONS

12 դեկտեմբերի 2018 թ.

«Hetq.am» էլ/թերթի լրագրող
Տիրայր Մուրադյանին

Հարգելի Տիրայր Մուրադյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ կից ներկայացվում է ՀՀ փոխվարչապետի և ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի աշխատասենյակների և հանգստի սենյակների համար ձեռք բերված գույքի մասին տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է վերանորոգման վերաբերյալ հարցին, ապա հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 5-ի N 367-Ն գաղտնի որոշման համաձայն՝ ՀՀ վարչապետի, ՀՀ 2 փոխվարչապետերի, ինչպես նաև Բաղրամյան 26 հասցեում տեղակայված նախագահի աշխատասենյակների և հանգստի սենյակների մասին տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ:

ՀՀ մյուս փոխվարչապետի և ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի աշխատասենյակների և հանգստի սենյակների վերանորոգման աշխատանքները կատարվել են տարիներ առաջ, և դրանց իրականացմանն առնչվող փաստաթղթերն արխիվացվել են: Հավելենք նաև, որ 2017 թ. ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Վահե Ստեփանյանն անձնական միջոցներով իրականացրել է իր աշխատասենյակի ներքին հարդարման (կոսմետիկ) աշխատանքներ:

Վարչության պետի տեղակալի պաշտոնակատար
Արմեն Խաչատրյան

Հեռախոս՝ (374 10) 52-87-12
Phone: (374 10) 52-87-12
Էլ.փոստ՝ press@gov.am